

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՔՐՈՆՆԻԿՈՆ՝

ՎԱՏԻԿԱՆ ԵՍԵԴՆՅՈՒՆ՝

— Պապի միութեան հրաւիրող վերջին կոնգալը (Satis Cognitum), որի վրայ այնքան մեծ յոյսեր էին դրել Վատիկանում, սպասուած ազդեցութիւնը չունեցաւ, այլ ընդհակառակն մեծ ընդդիմադրութեան հանգիպեց։ Այս ամառս Վիեննայում մի յատուկ բողոքի ժողով գումարուեց, որին 250 անձերից աւելի մասնակից էին օրթոդոքսներից, հին կաթոլիկներից, բողոքականներից և անգլիկաններից, ժողովը միաձայն ընդունեց հետեւեալ եզրակացութիւնը. «օրթոդոքս բողոքական, հին կաթոլիկ և անգլիկան եկեղեցու անդամներին ժողովը արտայայտուած է այն համոզմունքը, որ բոլոր քրիստոնեայ եկեղեցիների միութիւնն հնարաւոր է ոչ թէ պապին հնազանդելով, այլ միացմամբ աւետարանական աղատութեան և եղբայրական սիրոյ ոգով»։

Վաղուց արդէն նոյն սկզբունքն արտայայտել են մեր եկեղեցու և հարբ և քանիցս նոյնը կրկնել ենք ու մենք այստեղ։

— Պապի ընտրութեան գործն ունի ընդհանուր քաղաքական նշանակութիւն, ուստի և զարմանալի չէ, որ ամենայն ազգ աշխատում է ծիրանաւորների ժողովում իւր ներկայացուցիչներն ունենալ։ Այժմեան ծիրանաւորների ժողովը մէջ շատ տարբեր են զանազան ազգութեանց ներկայացուցիչների թուերն։ Այդ ժողովը պիտի 70 անգամ ունենայ, իսկ այժմ ունի 62 անգամ, որոնցից 33 հոգի իտալացիք են, իսկ 29 բոլոր միւս ազգերից, այսպէս՝ 6 ֆրանսիացի (որոնցից մէկն էլ վիսնա-նուեց), 6—աւստրիացի, 5—գերմանացի, 4—սպանիացի, 2—պորտուգալացի, 1—անգլիացի, 1—իռլանդացի, 1—բելգիացի, 1—աւստրալիացի, 1—կանադացի, 1—հիւսիսային Ամերիկացի, Գրանսիական կառավարութիւնն այժմ պահանջում է, որ ծիրանաւոր Բուրէի մահուանից յետոյ նշանակուի մինոր ֆրանսիացի ծիրանաւոր անգամ պապի պալատի, որ միշտ հռովմեոմն ապրէ։

— Լեհացիք համարուում են հռովմի սիրելի զաւակունք, սակայն այդ սիրելի զաւակունքը զբրկուած են իրենց մայրենի լեզուով աղօթելու իրաւունքից, Վերջերս լեհացի հայրենասէրներից մէկը հռովմում կամեցել է Վատիկանի կարծիքն իմանալ լեհերէնը ժամասացութեան լեզու դարձնելու մասին, Լեհացի ծիրանաւոր Լեզբոսովսկին, որ համարուում է Լեհաստանի պրիմաս, մերժելով մեր-

ժել է այդ պահանջն, առարկելով որ թէ Վատիկանն համաձայնի էլ, դրան հակառակ կը լինեն պրուսական, աւստրիական և ռուսական կառավարութիւնները։

Ինչպէս գերմանական կաթոլիկների բերան «Գերմանիա» թերթն հաղորդում է, պէտք է արդէն համաձայնութիւն կայացած լինի Վատիկանի և Պետերբուրգի միջև ռուսական Լեհաստանում ժամերգութեան լեզուն ռուսերէնի փոխելու մասին, Այս բանից սաստիկ զժգոհ է այդ թերթը։

— Պապի և իտալական կառավարութեան յարաբերութիւններն առիթ են տալիս զանազան ենթադրութիւնների՝ վերաբերութեամբ թագաժառանգի ամուսնութեան, Չեռնոգորիայի իշխանի դուստրը ամուսնութիւնից առաջ պէտք է փոխել իւր դաւանութիւնն և կաթոլիկ դառնայ, Այս մասին գեռ ևս յայտնի չեն պապի կարգադրութիւնները, նէպոլսի իշխանի պսակի օրհնութեան խնդիրն ևս առկա է, որովհետեւ հաղու թէ պապը թոյլ տայ այդ հանգէսը հռովմի որ և է մեծ եկեղեցում և որ և է ծիրանաւորի ձեռքով կատարուելու, Երեւում է որ պսակը կը կատարուի պալատական մատուռում և պալատի քահանայի ձեռքով։

— Լրագիրները կասկածում են, որ պապի նուիրակ Մակարիոս եպիսկոպոսը կարողանայ Մենելիքին համոզել իտալացի գերիններին արձակելու, Մակարիոսի հեռագիրը սակայն յոյս է յայտնում, որ շուտով կարող կը լինի աւետել 2000 իտալացի գերինների ազատումը, Անյաջողութեան զուշակողները յիշատակում են, որ պապը զլացել է թանկագին ընծաներ ուղարկելու նեգուս Մենելիքին։

— Գերմանական կաթոլիկների 43 համաժողովը տեղի ունեցաւ Դորտմունդում օգոստոսի վերջերին, համաժողովի բացումից առաջ կատարուեցաւ կաթոլիկ ընկերութիւնների մի տօնախմբութիւն, որին 20,000 անձինք էին մասնակցում։

Համաժողովին մասնակցում էին Գերմանացի եպիսկոպոսուներ, նշանաւոր քահանայք և Ռայխըստագի պատգամաւորներ, Չեական գործողութիւններից յետոյ նախագահը մի ճառով որոշեց ժողովի նպատակն և յոյս յայտնեց, որ հեռու չէ այն ժամանակը, երբ բոլոր աշխարհիս կաթոլիկները կունենան իրենց մի համաժողովն, Պատերբուրնի եպիսկոպոսն օրհնեց ժողովն և ապա ըսկսուեցան զեկուցումներն և վիճարանութիւնները։

Ժողովում հետեւեալ խնդիրները քննուեցան.

— Երիտասարդութեան սպասուածացող վտանգներն և դրանց առաջն առնելու միջոցները։

— Համարուեստից ընկերակցութիւններ կազմելու կարիքը:

— Հոգեւորականութիւն և ընկերական խնդիրներ ևլն:

— Քրանսիայում նորերս հիմնուած «անստուածութեան գիմագրող ընկերութեան» մասին շատ է խօսուում: Ինչպէս երևում է կրթութեան գաւազարդութեամբ կրօնական գիշացումներն աճում են հետզհետէ: Այժման նախարարակա Մեյլին անգամ մի ծառի մէջ ջատագով է հանդիսանում կրօնականութեան, բայց հակառակորդ կղերականութեան:

— Քրանսիայի արտաքին գործոց նախարար Հանոտոյին ներկայացել են Քրանսիայի բողոքականների ընկերութեան պատուիրակներն և խնդրել, որ հայածուած հայերին պաշտպանութիւն ցոյց տայ: Հանոտոն լսել է այդ խնդիրն և լուել, այնպէս որ բողոքական դաշնակցութեան կը մնայ այսուհետև միայն զրամով օգնել խեղճ հայերին:

Երեկ պ. Հանոտոն իւր լուութեան վերջ կը դնէ պարլամենտի բացումից յետոյ, որովհետև Լըմեր արքան այդ մասին հարցապնդումն պիտի անէ:

— Սաքսոնական իշխան Մաքսը քահանայ ձեռնադրուելուց յետոյ գնացել է Լոնդոն: Ուր մտադիր է գերմանացիների շրջանում գործելու:

— Քրանսիական կառավարութիւնը մեծ զբոսաւարութեամբ է ժողովում կաթոլիկ միաբանութիւնների վրայ գրուած հարկը, որից 6 միլիոն գնուես մնում է հաւաքելու:

— Բողոքականների թիւը Քրանսիայում 639,825 հոգի է: մինչ Լադովիկոս ԺԴ-ի ժամանակ 2 միլիոն էր նրանց թիւը: սրանից երևում է թէ ինչքան մեծ է դեռ կաթոլիկ կղերի ազդեցութիւնը Քրանսիայում: որ իւր հօտը պահպանում է բողոքական քարոզիչների ընդդէմ:

— Վաթիկիկութիւնը յառաջադիմում է հիւսիսային Ամերիկայի միացեալ նահանգներում: Ըսկսած 1892 թուից կայ մի առաքելական նուիրակ Վաշինգտոնում, որին ենթարկուում են 14 թեմեր իրենց առաջնորդներով: 1800 թուին միացեալ նահանգներում աւելն 53 անձից մէկն էր կաթոլիկ: 1850-ին 14-ից մէկը, իսկ այժմ 7-ից մէկն է կաթոլիկ: 1800—1880 Միացեալ նահանգների բնակիչներն աւելացել են 27 անգամ: մինչ կաթոլիկները 63 անգամ:

ՕՐԹՈՂՈՔԱՆ ԵՎԵՂԵՑԻ:

ՌՈՒՍՍԱՅ ԾԿԵՂԾՑԻ:

— Սեպտեմբերի 9-ին մի նշանաւոր օր էր ուսաց եկեղեցու համար: այդ օրը մեծ շքով հանուելան Զեռնիգովում նոր սրբացրած Ս. Թէոդոսի, Զեռնիգովի արքեպիսկոպոսի նշխարներն, որ երկու հարիւր տարուան ընթացքում անիւտ էին մնացել:

Վաթիկիկութեան և օրթոդոքսութեան կառուածներում ժամանակն էր ապրում Թէոդոս վարդապետը, որ 1691 թուից օգնական էր Զեռնիգովի արքեպիսկոպոսին և 1693 թուից սկսած առաջնորդ նոյն թեմի: Վաթիկիկութեան և նա 1696 թուին փետրուարի 5-ին և թաղուել եկեղեցու մէջ: Աղբսած այդ ժամանակից ժողովուրդը նրա գերեզմանը ուխտատեղի է դարձրել և ինչպէս պատմում են բազմաթիւ բժշկութիւններ են եղել շնորհիւ հ. Թէոդոսի: Վաղուց արդէն նկատուած էր, որ հանգուցեալ արքեպիսկոպոսի մարմինը չէր փտել և երբ գերեզմանը այժմ բոլորովին բացին, այդ հրաշքն ամենքի համար տեսանելի եղաւ:

Ժողովրդի մէջ տարածուած սրբութեան հրաշակը հրաւիրեց եկեղեցականութեան ուշադրութիւնը և այս տարի ուսաց սինօդը մի յանձնարումով կազմեց կատարուած հրաշքներն ստուգելու: Յանձնարումը ստուգեց 50 հրաշք և ներկայացրեց սինօդին, որ և վճռեց սուրբ հրատարակել Թէոդոս Զեռնիգովի արքեպիսկոպոսին: Այդ մասին կայսերական հաճութիւնն ստացուեցաւ և երկու օր նուիրեց այդ սրբի յիշատակին: մին սրբի մահուան օրն, փետր. 5-ի միւսը նշխարների բացման օրն, սեպտ. 9-ին:

Նշխարների բացման օրն Ս. Պետրբուրգի եկեղեցւոյ մէջ մեծահանդէս մաղթանքներ կատարուեցան: իսկ Զեռնիգովում մի շարաթ շարունակ եկեղեցական տօներ կատարուեցան, որին ներկայ էր ահագին բազմութիւն:

— Պսկովի նահանգում մի նոր աղանդ է երևացել, որ կոչուած է «Եւլեն ուլ ի նա», այն կնոջ անունով, որ սկսել է այդ աղանդը քարոզել: Սա շարունակութիւն կարող է համարուել նոյն նահանգում 25 տարի առաջ գոյութիւն ունեցող «Սիրաֆիմովը շինա» աղանդի: Նոր մարդարեւ հին քարոզում է: Թէ ինքն աղօթելու ժամանակ քանիցս Փրկիչն իջել է պատկերի վրայից և մտել իւր մէջ, թէ ինքը քանիցս մինչև 9. երկինքն է վերացել: Թէ շուտով աշխարհիս վերջ պիտի լինի, որ սակայն իւր աղօթքով յետաձգուում է, թէ ամուսնանալ պէտք չէ: հերիք է հոգեւոր ամուսնութիւնն ևլն ևլն: Այս առթիւ

«Յերկով. Վեստ», ասում է «ամենամիտ աղանդն անգամ նորութիւն չէ Ռուսիայում, բայց զարմանալի է, որ ինչքան էլ անմիտ լինի մի աղանդ, այնուամենայնիւ նա իւր պաշտպաններն է գտնում ուս կրթեալների մէջ»:

— «Յերկովնի Վեստ», նկարագրելով նոճիւնի կԱՅՍԵՐԿԱՆՆ ՄԵԾՈՒԹԵԱՆՑ ուղեւորութիւններն Եւրոպայում, յիշատակում է այն պատրաստութիւնը, որ տեսնում են Փարիզում, ի միջի այլոց հաղորդում է նոյն թերթը, որ մտադրութիւն կայ Ռուսիայի կԱՅՍԵՐԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ անաջարկել «Փրանսիական հասարակապետութեան պաշտպանի» տիտղոսը:

— Ներքին Գործոց նախարարութիւնը համաձայնութեամբ Սինդիկատի օրէր պրակտիկոսի հետ վճռել են արգելել բեմերի վրայ սխալը և այլ եկեղեցական սրբութիւնների գուրս հանելը: Այս մասին հրամանագրուած է ոստիկանական վարչութեանց խտուրթեամբ հսկողութիւն ունենալ:

— Ինչպէս պաշտական քարոզիչ հ. Եանըշեմն հաղորդում է «Յ. Վ.»-ին, 1892 թուականից բանագնացութիւն է սկսուել հին—կաթոլիկների և ողեսաց սինդիկատի միջև միութիւն հաստատելու համար: Այդ միութեան պայմաններն քննում են ահա չորս տարի է երկու կողմից նշանակուած յանձնախմբերում:

— Ռուսաց թեմական դպրոցների շրջանաւարտներից մի քանիսին թոյլ է տրուած համալսարաններ մտնելու: Այս փաստը յոյսեր ծնեցրեց, որ բոլոր շրջանաւարտ դպրոցներին պիտի թոյլ արուի համալսարանի ուսանող լինել: Սակայն ինչպէս հաղորդում է «Պետերբ. Վեդ.» այդ դէպքերն հետեանք են առանձին միջնորդութիւնների և մտադրութիւն չը կայ դպրոցականներին բոլորին էլ համալսարան մտնելու իրաւունք տալու:

ԱՄԵՐԻԿԱՆ ԵԿԵՆՆԵՐԻ.

Լամբեթի ժողովի (Lambeth conferenz.) այսպէս կոչուած յանուն Lambeth Place—հրապարակի, ուր գտնուում է Լոնդոնում արքեպիսկոպոսական բնակարանը) առաջիկայ տարուան ծրագիրն հրատարակուել է արդէն: 1897-ին, յուլիսի 5ին պիտի բացուի այդ ժողովն և պիտի տևէ մինչև 10, ապա երկուշաբթի դադար առնելուց յետոյ կրկին պիտի ժողովն սկսուի և տևէ մինչև 31 յուլիսի: Անգլիկան եկեղեցու գլուխն շրջաբերականով գիմել է բոլոր աշխարհիս դաւանակից եպիսկոպոսներին և ժողովի հրաւիրել:

Ահա այն ծրագիրն որ կազմուած է ժողովի համար համաձայն ամեն կողմերից յայտնուած ցանկութիւնների 1. քննադատական հետազոտութիւն Ս. Գրոց. 2. կազմակերպութիւն անգլիկան եկեղեցական համայնքի. ա) մի կեդրոնական խորհրդակցական մարմնի հաստատութիւն, բ) տեղեկատու յանձնախմբի կարգումն, գ) յարաբերութիւններ դադութեան կրթմանների, մետրոպոլիտների և առհասարակ բոլոր եկեղեցականութեան առ արքեպիսկոպոսն «Էնտրերբրի», զ) Լամբեթեան ժողովի գործունէութեան սահմանները. 3. եկեղեցու պարտքն առ դադութ, 4. պատերազմի փոխանակ միջադպրոց դատարանի հաստատումն. 5. եկեղեցու գործը վերաբերութեամբ արդիւնաբերութեան. ա) անգործ բանուորներ. բ) արդիւնաբերութեան մէջ միացեալութեամբ գործել. 6. եկեղեցիների միութեան խնդիրը, վերաբերութիւն դէպի արեւելեան եկեղեցիք, դէպի հռոմէական և այլ քրիստոնեայս. 7. Յեղափոխական շարժումներ Եւրոպայում և այլուր. 8. Արտաքին քարոզութիւն. 9. Արօնական ընկերութեանց յարաբերութիւններն առ եպիսկոպոսութիւն. 10. Ժամակարգութեան խնդիրներ. 11. Ճեմարանական աստիճաններ աստուածաբանութեան: Առաջիկայ ժողովին հրաւիրուած են 254 անձինք, հաւանական է որ 200 եպիսկոպոսներ ներկայ լինին ժողովին: Church Times թերթը քննելով այս ծրագիրն զարմանք է յայտնում, որ աճուսնութեան խնդիրը ծրագրից դուրս է մնացել, որով այնքան հետաքրքրուած է հասարակութիւնը:

— Ի տակն երիտասարդ ման խնդիրն անգլիայում հետզհետեւ նորոգուում և հետեւողներ է գրտնում: Այժմ 4 հնոցներ (Crematorien) կան Անգլիայում: վերջինը բացուեցաւ Գլասկովում, ուր հանդիսին մասնակցեցին և շտապանդական եկեղեցականութեան գլուխներն: Գլասկովի հնոցն իւր մատուցում և կահաւորութեամբ նստել է 27,000 ուրբի, ամեն մի այրելի դիակի համար վարձ են պահանջում 50—20 ուրբի, իսկ աճիւնի տեղի համար նոյն գնով վարձ է առնուում նայելով ժամանակի տեղոյութեան Հայդելբերգում շատ աւելի աճան է դիակների այրումն, ամեն մի դիակից առնում են այնտեղ 12 ուրբի, իսկ ամեն մի յաջորդ դիակի համար 5 ուրբի:

Գլասկովի հնոցում ջերմութեան աստիճան է 1100 Յելսիուսի, դիակը ներս տանելուց մի ժամ յետոյ դուրս բացուում և աճիւնն—առանց ձեռք դպցնելու—թափուում է պատրաստի անօթի մէջ, Հնոցի բացման հանդիսին դր. Զ. Ընտէր մի ճառ խօսեց, որի մէջ ասաց. թաղման եղանակը գործ

չունի քրիստոնէական հաւատքի հետ, միսն ու արիւնն նշանակութիւն չունին երկնքի արքայութեան մէջ:

ԲՈՂՈՒՔԱԿԱՆ ԵԿԵԼԵՑԻՆԵՐ.

ԳԾՐԾԱՆԻԱ.

Լուծերի անձնասպանութեան խնդիրն գրական վիճարանութեան խնդիր է այժմ գերմանական կաթողիկէ և բողոքական թերթերի մէջ: Մի կաթողիկէ քահանայ Վլադս անունով վերջերս մի տետր հրատարակեց, ուր կամենում է ապացուցանել, որ Լուծերն անձնասպան է եղել. բոլոր փաստաբանութիւնն հիմնած է այն տեղեկութեան վրայ, որ Լուծերի մահուանից 70 տարի յետոյ մի ճիշդութիւն հաղորդել է: Դրա ասելով Լուծերի ծառան կաթողիկէ է դարձել և ապա իբրեւ խոստովանութիւն յայտնել, որ իւր տէրն յուսահատութիւնից անձնասպան է եղել: Բոլոր այս պատմութիւնը մի նմանաբանութիւն է, Յուդայի պատմութիւն և ծընուող կաթողիկէ կղերի մօթի, ժամանակակից անձանց վկայաբանութեամբ Լուծերը բնական մահով է մեռել և այս փաստն ընդունում են բանիմաց կաթողիկէներն ևս, որոնցից շատերն խիստ դատապարտում են Վլայսին:

— Կրօնական — ընկերավարական շարժումներն արագութեամբ աճում են Գերմանիայում, որի հետեւեցներից շատ երկիւղ են կրում պահպանողականները:

— Բեռլինում Սեպտ. 18-ին մի մեծ ժողով է տեղի ունեցել բողոք յայտնելու համար ընդդէմ Տաճկաստանի, որ անմեղ հայ քրիստոնէականներին հալածում է: Ժողովին ներկայ են եղել 2000 անձից աւելի, որոնց թուումն եղել են և հայեր ու հայուհիք: Ժողովի ղեկավարներն են եղել պատուր Ֆարէր, Լէպսիուս, Իւլիւս Վերներ, պրոֆ. Թոււմայեան, Գոկտոր Լէպսիուսը, որ հռչակաւոր պրոֆեսոր Լէպսիուսի որդին է, անձամբ Փոքր Ասիայ է ուղևորուել և ստուգել տաճկական գազանութիւններն: Այս ուղևորութեան ժամանակ ձեռք բերած փաստերը նա հրատարակել է պահպանողականների բերան «Ռայսբոտէ» թերթում և ապա գրքովով: Ի պատասխան Լէպսիուսի զրբածների «Հիւս. Գերմ. թերթը» թրքական դեսպանատնից ստացած հերքումներով հանդէս էր եկել, ուստի և ժողովն իւր զայրոյթն յայտնեց այդ թերթի դէմ:

Ինչպէս լրագիրներն հաղորդում են, մի երկրորդ ժողով ևս տեղի է ունեցել Բեռլինում, որին մասնակցել են և ընկերավարականները:

— Հեռագիրն արդէն հաղորդեց, որ պրուսական ոստիկանութիւնը պրոֆ. Թոււմայեանցին վնդել է Գերմանիայից, որ յօգուտ հայերի քարոզութիւններ չանէ: Այսպէս Բարմէն քաղաքում տեղի ունեցած ժողովի պատճառով պատասխանութեան է հրաւիրուած մի գերմանացի հայասէր ևս, այս առթիւ «Ռայսբոտէն» գրում է. «O armes Deutsches Reich!» (ով խեղճ գերմանական պետութիւն):

— Զուիցերիայում կազմուած հայոց օժանդակող ընկերութեան նման ընկերութիւններ են կազմուել և Գերմանիայում, դրանց հրատարակած հրաւերին ստորագրել են 600 աւելի անձինք զանազան դասակարգերից, որոնց մէջ աչքի են ընկնում նշանաւոր պատմորները, պալատական քարոզիչներ և գիտնականներ: Ահա այդ հրաւերն:

«Բոլոր քրիստոնէութեան աչքի առաջ վերջին 10 ամսուան ընթացքում տաճկական Հայաստանում 100,000 անդէն քրիստոնեայք են մորթուել: 2500 գիւղեր կողոպտուել և աւերուել են, 568 եկեղեցիք և 77 վանքեր են կողոպտուել և աւերուել, 646 քրիստոնեայ գիւղեր բռնի մահմետականացուել, 328 եկեղեցիք մղկիթի փոխարկուել, 170 հայ քահանայք և 21 բողոքական քարոզիչներ հրաժարուելով իսլամն ընդունել, մորթուել են...»

Ն. Զ.

Christliche Welt-ի 31 հ.ում յառաջ են բերուած երկու նամակներ՝ խմբագրի Պետութիւնների քաղաքականութեան մասին զրբած յօդուածների առթիւ, որոնք Արարատի նախորդ համարից ծանօթ են ընթերցողին: Ա. նամակի իմաստն է, թէ ինչպէս դատարանը պատուում է այն ծնողներին, որոնք չարաչար են վարժում իրենց որդիներին հետաշուք էլ պետութիւնները պարտաւոր են Տաճկաստանին պատասխանատուութեան ենթարկել՝ դէպի իւր հպատակները ցոյց տուած անգթութիւնների համար և թէ Գերմանիայի պարտականութիւնն աւելի մեծ է այն տեսակետից, որ քաղաքական շահեր չունենալով՝ աւելի ընդունակ է գաղափարական սկզբունքներով առաջնորդուելու և բարոյական ճշնումն գործ դնելու: Բ. նամակը բողոքովին հակառակ հայեացքների արտայայտութիւն է: Սորա հեղինակի կարծիքով ամեն պետութիւն պարտաւոր է միայն իւր հպատակներին հովանաւորել և ուրեմն ամեն հարց վերջանում է նորանով, որ հայերը գերմանական հպատակներ չեն. «Բոլոր ազգերի քրիստոնեայ համայնքը պէտք է աղօթէ հայերի կրած նեղութեան համար և օգնէ նոցա, բայց որ և է ազգի աշխարհական պետութիւնը ոչ ինչ գործ չունի»: